

«ԱՂԲԻՒՐԻ» ՅԱՒԵԼՒԱԾ

ՏԱՐԱԶԸ ԼՈՑՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ

№ 20 Կիրակի 16 Մայիսի | Չորրորդ տարի 1893

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է «ԱՂԲԻՒՐԻ» ԵՒ «ՏԱՐԱԶ» 1893 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մեր բաժանորդներից ընծաներ կըստանան միայն «ԱՂԲԻՒՐ» և «ՏԱՐԱԶ» ի միասին ստացողները, իսկ միայն «ԱՂԲԻՒՐ» կամ «ՏԱՐԱԶ» ստացողները ոչ մի պրէմիա չեն ստանալ։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԷՒՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Մէկ երկու շաբաթ է՝ Թիֆլիսում կըսկսէր «ուսանողական» սեզոնը-շրջանը։ Ռուսաստանի և արտասահմանի զանազան համալսարաններից և առհասարակ բարձրագոյն դպրոցներից արդէն սկսել են վերադառնալ ուսանողները։

Ամեն տեղ և ամեն հանգամանքում հայ հասարակութիւնը միշտ սիրով ողջունել է այդ «ամառան կարապետներին» գալուստը և մայրական գթով դիմաւորել գրանց։

Հասարակութիւնը սիրում է ուսանողութիւնը ոչ միայն նրա համար, որ իր ապագայի ամենափայլուն յոյսերը կապւած են այդ նոր սերնդի հետ, այլ և նրա համար, որ հէնց ներկայումս տեսնում է ուսանողական շրջանի մէջ անձնագոհութեան—ալտրուիզմի ձգտումները աւելի զարգացած, քան թէ կեանքի գործիչների մէջ։

Գիտութեան և համալսարանական մթնոլորտի ազդեցութեան տակ երիտասարդը սկսում է գիտակցօրէն վերաբերուել դէպի կեանքը և նրա պահանջները։ Հէնց սկզբից, երբ նա ընտրում է իր համար ուսումնասիրութեան մասնագիտութիւն, նրա միտքը ակամայ կանգ է առնում մի տանջող հարցի վրայ թէ այս կամ այն մասնագիտութիւնը որքան համապատասխանում է իր ընդունակութիւններին, ինչ նպատակ ունի կեանքի մէջ, ինչին է պէտք։

Երիտասարդը կարող է և սխալ կերպով լուծել այդ հարցը երբեմն ընդունակութիւնները լաւ չճանաչելով, ընտրել մի այնպիսի ճիւղ, որի համար բնութիւնը նրան առանձին ձիրք չէ տւել։ Սակայն այդ սխալների ժամանակ էլ ուսանողին իր ընկերական շրջանն աննկատելի կերպով դրդում է տեսնել մասնագիտութեան գլխաւորապէս հասարակական կողմերը թէ ինչ օգուտներ կարող է բերել այդ մասնագիտութիւնը հասարակութեան համար։ Եւ ամեն մի ուսանող՝ խօսելով իր ապագայ գործունէութեան մասին, երևակայում է իրեն անպատճառ հասարակական գործիչ, որն ընդհանուրի օգուտը գերադասում է անձնականից։ Այդպիսի ազդեցութիւն է ունենում գիտութիւնը և համալսարանական մթնոլորտը մինչև ան-

գան ուսման երիտասարդների վրայ, որոնց եսասիրութիւնը զարգացած է նոյն իսկ նրանց ծննդեան օրից։ Ոգևորուած հասարակութեան համար գործելու եռանդով՝ ուսանողի բոլոր շարժուածքները լի են ինքնավստահութեամբ. նրա աշխատանքը ստանում է բարձր նպատակ, կեանքը իմաստ և աչքերի մէջ փայլում է խելացիութիւն, գիտակցութիւն։

Ա.հա բացւում է կեանքում գործելու ասպարէզը և մտքից գոլորշիանում է աշխատանքի այդ նպատակը, իմաստը։ Մի քանի տարի ի զուր սրոնելով իր մասնագիտութեանը համապատասխանող մի պաշտօն, մեր համալսարանականը հրաժարւում է իր ընտրած ճիւղից, մի ուրիշ տեղ է փնտրում իր բախտը և ապրուստի աղբիւրի համար թափառում է մէկ գործից դէպի միւսը—և այդ գործերից ոչ մէկն արդէն չունի նրա համար բանաստեղծական հրապոյր, ոչ մէկը չէ ոգևորում նրան։

Կեանքի արագաշարժ ոլորտի մէջ մոլորւում է ուսանողի միտքը, թուլանում է, ուժասպառ է լինում և գործունէութեան հասարակական նշանակութիւնը ոչնչանում է դրա համար. մի կտոր հաց, մի քանի կոպէկ փող...

Աչքերի մէջ մարում է ոգևորուած եռանդի փայլը, յօնքերին պատում է տխրամածութիւն և սիրտը կրծող թախիծ, շարժուածքների մէջ սփռւում է երկչոտութիւն. կեանքը կորցնում է իր իմաստը, իր գրաւչութիւնը։

Ո՛չ, այդ՝ առաջւայ կրակոտ, վառվռուն, ինքնավստահ, անձնամոռացութեամբ պայքարող նորը չէ և դրա կողմը չէ հասարակութեան համակրանքն ու սէրը։

Շատ պատճառներ կան, որ ուսանողը այդպէս արագ փոխւում է կեանքի մէջ։ Այդտեղ գլխաւորապէս մեղաւոր է մեր ընտանեկան կրթութեան ամբողջ սիստեմը։ Սակայն մենք կուզէինք այստեղ մատնացոյց անել միայն մի բանի վրայ. այն է՝ ուսանողի համար խիստ, անբեկանելի կերպով վերացական է այն ընդհանրութիւնը, որի համար գործել նա երազում է համալսարանում եղած ժամանակ։

Այդ ընդհանրութիւնը, այդ հասարակութիւնը, այդ ժողովուրդը որտեղից կարող է նա ճանաչել։ Խօսեցրէք նրան հռոմայեցոց քերականութիւնից, Ամերիկայի անցեալից, նա կրկարողանայ ձեզ պատասխանել, բայց շրջակայ կեանքին միք մօտենալ։ Այդ պատճառով չէ՞ որ ուսանողների իդէալները ժողովրդի, ընդհանուրի օգտին գործելու՝ այնպէս որոշ, այնպէս պարզ, թանձրացեալ — կոնկրէտ չեն, ինչպէս կարող էին լինել, եթէ նրանք լաւ ճանաչէին այդ ժողովուրդը, այդ ընդհանրութիւնը։ Նէրականեն երիտասարդների այդ ցանկութիւնները, բայց դրանք զուրկ են՞ անհրաժեշտ տեղեկութիւններից։ Ընդհանուրի մտաւոր, - բարոյական և տնտեսական առաջադիմութեան համար պէտք է գործել, դրա մէջ հ ա մ ո զ ւ ա ծ է ուսանողը և անգամ յափշտակւում է այդ համոզմունքով, սակայն այդ համոզմունքի վրայ պէտք է ա ւ ե լ ա ն ա յ և զ գ ա ց մ ո ւ ն ք ը, անմիջական սերը դէպի ընդհանրութիւնը, որպէս զի նա ճիշտ և ընդունակ լինի ալտրուիզմի։ Այդ զգացմունքը ծլում է, աճում է միայն այն ժամանակ, երբ երիտասարդի հոգին շփւում է անմիջապէս կեանքի հետ, մարմինը՝ նրա մարմնի հետ։

Ա.հա ամբոխի հետ այդ անմիջական շփումը յաճախացնելու համար է որ պէտք է կապւեն ուսանողական էքսկուրսիաներ։ Անցնելով անձակուրդներին—ոտով կամ ձիով—գիւղ գիւղ, ուսանողները կրկարողանան ժողովել կեանքից այնպիսի տպաւորութիւններ, որ ընդ միշտ մնալու են նրանց հոգեկան աշխարհի մէջ, կրսովորեն այնքան, որքան չէ կարող սովորեցնել պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական մի ձեռնարկ, կրզգան այն կենդանին կապերը, որ կապում են անհատի վիճակը ամբոխի բարօրութեան հետ, ի մի կրձուլւեն այդ ամբոխի հետ՝ բոցավառւելով—տգիտութեան, անբարոյականութեան, չքաւորութեան դէմ—տալով ժողովուրդը հանելու ճգտումով։ Իր ինքնակրթական աշխատութիւնների մէջ ուսանողութիւնը չըսպասէ է մոռանայ երկրի ժողովրդի ուսումնասիրութեան այս գլխաւոր միջոցը։

Այդ էքսկուրսիաները՝ միւս կողմից, ո գ ա մ ա ր դ կրդարձնեն մեր ուսանողներին։ Նրանք ստիպւած կրլինեն յաղթել ճանապարհորդական հազար ու մէկ դժւարութիւնների, հանդիպել բազմաթիւ վտանգների և կռւելով այդ բոլորի դէմ, զարգացնել իրենց կամքը. այդ առաջին փորձերը կը լինեն ինքնուրոյն, անկախ կեանքով ապրելու։

Ա.րշաւանքները այդպիսով մի կողմից կրզարգացնեն երիտասարդների անմիջական սերը դէպի ամբոխը, միւս կողմից՝ կամրացնեն նրանց անվարժ կամքը։ Այդ յատկութիւններն անհրաժեշտ են այն ամեն մէկի համար, որ կամենում է ընդհանուրի օգտին անձնազոհութեամբ գործել. այդ ժամանակ միայն կեանքի դառնութիւնները չեն տապալիլ երիտասարդութեան մէջ նրա եռանդը և ինքնա-

վոտահուԹիւնը, և ամեն մի շեղումի իդեալից, կը ծանրանայ իբրև մի բեռ խղճմտանքի վրայ։

Մեր մէջ վաղուց է որ խօսւում է այդպիսի էքսկուրսիաների մասին, բայց դեռ ոչինչ չէ արւած։ Երեք տարի առաջ Թիֆլիսում հաւաքւած ուսանողների մէջ խորհրդակցուԹիւններ սկսւեցին։

Այս տարի ուսանողները վաղ են վերադառնում տուն, երբ դեռ քաղաքիս ազգաբնակուԹիւնն ամբանոցները գնացած չէ, և նոյն իսկ իրենք կարող են տալ մի երկու ներկայացում իրենց չքաւոր ընկերներին օգնելու՝ արշաւանքների մէջ մասնակցել։

Անգագաղում գուցէ կարելի լինի մի յայտնի կապ ստեղծել բոլոր ուսանողական արշաւանքների մէջ, յայտնի ընդհանուր ծրագիրի՝ ժողովուրդն ուսումնասիրելու և տարբեր գաւառները այցելելու համար։ Սակայն սկզբում շատ լայն և ընդարձակ նպատակներով ղեկավարելը կարող է միայն դժուարացնել գործը։

Երբ էքսկուրսիաները մի սովորուԹիւն կը դառնան, Թող այն ժամանակ զանազան համալսարանների ուսանողուԹիւնները՝ աշխատուԹիւնը բաժանելով, ուսումնասիրեն ժողովուրդը որոշ սիստեմով և տարեցտարի հրատարակեն իրենց գիտողուԹեանց արդիւնքը — մեկ ընդհանուր ուսանողական ժողովածու, որ՝ ինչպէս յայտնի է, վաղուց մեր ուսանողների ցանկուԹիւնն է։

Ս. Լ.

ՏԽՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

Գիշերը է։ Մենակ, անխօս, անընկեր
Նստած սենեակում
Որպէս բանտարկեալ — վշտի շղԹաներ
Սիրտս են մաշում.
Եւ ստէպ լսում է իմ յուզւած կրծքից
Խորին հառաչանք,
Բայց հառաչանքիս չունեմ ձայնակից,
Զկայ արձագանք...

Զորս կողմս պատեր — անզգայ, անմռունչ,
Եւ միշտ անվրդով
Նայում են վերաս լռիկ, անմռունչ,
Սառըն հայեացքով.

Եւ քնէ վոյԹ նրանց, ԹէԹ մի խեղճ էակ
Մինչև առաւօտ
Թախծալից սրտով պիտ տանջւի մենակ՝
Խնդրելեան կարօտ։

Դանդող ու տաղտուկ սահում են ժամերն.
Ո՞ւր ես քաղցրը քուն.
Թոյլ պլպլում է և աղօտ լապտերն —
Մօտ է հանգչելուն...

Ա՜խ, քնէ կըլինէր, գէԹ դու, նազելիս,
Մօտըս լինէիր.
Այս տխուր ժամին արտասուքն աչքիս
ԳէԹ դուռ սրբէիր։

Քո մատաղ կուրծքին գլուխս խոնարհած,
Երկար ժամերով
Ես զրոյց կանէի քեզ հետ սրտաբաց,
Մտերիմ սիրով.

Քեզ կըպատմէի վշտերը սրտիս,
Իմ ցաւն, արտասուք.
ԹէԹ քնչուս ես միշտ տանջւում եմ, լալիս,
Մարդկանցից ծածուկ.

ԹէԹ քնչուս առյդ, մատաղ հասակում
Ես որպէս մի ծեր,
Կեանքի խնջոյքից հեռու եմ փախչում —
Միշտ սառն, անտարբեր...

Եւ գիտեմ, մանուկ, հոգիս ցաւագար
Քո մէջ կըգտնէր
Իր վերք ու ցաւին անկեղծ մխիԹար,
Սփոփիչ ընկեր...

Բայց, աւաղ, զուր եմ ես կարօտագին
Եւ տխրահայեաց
Նայում քո անխօս, սիրուն պատկերին,
Սեղանիս դրւած.

Դու չըկաս մօտըս... Եւ չես էլ լինիլ...
Անէծք իմ բախտին,
Որ ինձ պատժել է — միշտ լուռ, կարօտիլ՝
Աչքըս քո ճամբին...

Գիշեր է։ Մենակ, անխօս, անընկեր
Նստած սենեակում
Հազար-մի վշտեր, հազար-մի ցաւեր
Սիրտս են մաշում.
Եւ շուրջս միայն չորս պատեր անշունչ
Եւ միշտ անվրդով
Նայում են վերաս լռիկ, անմռունչ,
Սառըն հայեացքով...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

1893 Թ. Մոսկւա։

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՀՌՈՆԵՐ *)

(Նկատի մը ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան համար)

III.

Գիւղացիների համոզմունքների բ. տեսակը, որոնց ես դարձեալ նախապաշարմունք անունն եմ տալիս, աւելի նշանաւոր են հանդիսանում իրանց երևոյթներով և իրանց ազդեցութեամբ գործնական-հասարակական կեանքի վրայ, որովհետև գիւղացին իր հասարակական համայնական ձեռնարկութեանց մէջ սորանով է առաջնորդւում: Այս վերջին աշխարհահայեցողութիւնները բազմաթիւ և բազմատեսակ են և նոյնքան էլ բազմապիսի դեր են խաղում նորա կեանքի մէջ: Դոցանից մէկի վրայ ենք հրաւիրում ընթերցողի ուշադրութիւնը. դա գիւղացու «խաթրի» գաղափարն է: Բոլոր պետական օրէնքները և դոցանով գիւղացուն շնորհուած բոլոր անհատական և մարդկային իրաւասնքները, համայնական կեանքի բոլոր գեղեցիկ կողմերը այսօր ի դերև են ելնում նոյն գիւղացու «խաթրի» գաղափարի առաջ: Բարեկամութիւնը չճանաչելը, «խաթր» չպահելը գիւղացու կարծիքով մինչև այն աստիճան ստորութիւն, անազնուութիւն և անարդարութիւն է, որ երբ նորա խաթրը բաւականութիւն չի ստանում, նա բացարձակ կերպով առանց ամաչելու պահանջ է անում, լողոք է յայտնում և հասարակաց կարծիքի դատաստանին ենթարկում այդ խնդիրը մի «իրաւացի զայրոյթով» բացագանչելով — «Աստուած կվերցնէ, որ նա իմ բարեկամն ըլի, ընձի հետ աղ ու հաց ուտի, ու իմ խաթրը չպահի (այս ինչ գործում) ծօ, էգ ո՞ր Աւետրնի կողմա գրած» *): Ժողովրդի ընտրողական իրաւունքը, որ օրէնքով սըրբագործած է, ամենից աւելի է տուժում այդ «խաթրից»: Վերցնենք հէնց գլուխի ընտրութիւնը: Սակայն նախապէս պիտի ասեմ, որ այդ ընտրութիւնը գիւղացու հասարակական կեանքի այնպիսի խոշոր երևոյթներից մէկն է, եթէ ոչ առաջինը, որ գիւղացիների առանձին ուշադրութեան առանձին հոգսերն առարկան է դառնում, որովհետև գլուխի անձնաւորութիւնը անմիջական կապ ունի համարեա իւրաքանչիւր ընտրողի անձնական շահի հետ, որը միշտ գերադասելի է նոցա մօտ հասարակականից:

Գլուխի ժողովրդի վերաբերմամբ խաղացածների մասին կը խօսենք մի այլ անգամ, այժմ անցնենք ընտրութեանը: Իւրաքանչիւր եօթ գիւղ կազմում է մի գլուխութիւն (այս 7 թիւը վրճռական չէ) մի անձի հսկողութեան ներքոյ, որն ընտրւում է այդ գիւղերից գլուխ անւամբ:

Ընտրութիւնից քանի մի օր առաջ բոլոր գիւղերի բնակիչները բաժանւում են երկու մեծ բանակի, իսկ իւրաքանչիւր բանակն ունենում է իր թեկնածուն գլուխութեան համար: Այդ թեկնածուները լինում են անպատճառ հարուստ և միմիայն այդ պատճառով դիրք և ազդեցութիւն վայելող անձինք. իսկ խելքի և ազնուութեան չափը ոչ ոք չէ հարցնում:

Դոցա թեկնածութիւնը հրապարակի վրայ դնողը ո՛չ այնքան բուն ժողովուրդն է, որքան հէնց այդ անձանց մերձաւորները, որոնք նոցա, իբրև բարեկամի, ազգականի, իշխանի «խաթրը» պահում են, որովհետև նոցանից շահւում են և այս բանը նոքա բոլորովին չեն ծածկում: Դոքա էլ ունին իրանց մարդիկը, որոնք իրանց խաթրով և շահերով կապւած են ուղղակի առաջինների հետ և դոցա միջոցով էլ անուղղակի կապւած են ընտրելիների հետ. դոքա շարժւում են և գործում են համաձայն նրանց պատրոնների հրահանգի և ցանկութեան: Բոլորի պարտքն է որսալ ամբոխի մնացած մասի անտարբերը անդամներին, այդ դէպքումն էլ գէնքը կամ խաթրն է կամ թասիբը: Այս գործը գլուխ բերելու համար շէն մնան գիւնետները. ահա երկու հոգի մէկի գօտուց կախած համարեա քաշէքաշ տանում են դէպի գիւնետուն, այնտեղ մի շիշ գինի առաջներն են դնում և լսում քարոզ կարդալ. «Էհ, ախպէր, X-ի գլուխութիւնը տեսանք էլի, քանի հետ քեզ բանտ գրեց, քանի հետ քո ջուրը կարեց էն ան՛հոգին, պըտի քարըդ էլի էն անաստուածին տաս, բա դու թասիբ չունի՞ս, ո՛նց ես քո բարեկամի խաթրը կոտրում» (ով գիտէ 20 տարի առաջ քաւոր են եղել) ասլն. այսպիսով համոզում են սորան, յետոյ այս կարգով ներս են բերում երկրորդը, երրորդը, չորրորդը...

---

*) Տես „Տարազ" № 19.

**) «Խաթրը» մօտաւորապէս նման է մեր ինտելիգենտների գործածած «ինամութիւն» բառին, որպիսի դէպքով առաջնորդւում են մեզանում—յայտնի գոյնի տէր խմբակները. միայն այս բառերի կիրառութիւնը խոշոր տարբերութիւն ունի. գիւղացին խաթրի ազդեցութեամբ գործելուց յետոյ համարում է մի լաւ գործ կատարած լինել, և այն հռչակում է ի լուր աշխարհի, դա նորա համոզմունքն է և նա վարւում է բոլորովին ազնիւ, իսկ «ինամութեամբ» առաջնորդուղ մեր չատ ինտելիգենտ համարւածները այնքան պատիկ են, որ իրանց արածի բուն չարժառիթները յայտնելու քաջութիւնը չունենալով, իրանց զազրելի արարքներն աշխատում են սքօղել կեղծ համոզմունքների քօղով, որպէս նրանց դէմքն է դիմակաւորւած:

Ա. Ա.

Ա. Գրիգորյանական երկաթուղի. Գրակալի կամուրջը.

խօսում են յանուն «խաթրի», հիւրասիրում են, կմկռկ ընտրելուն պարսաւում, մխսին գովում, եր-
=նքը հասյնում և այսպիսով ստւարացնում են իրանց բանակը: Պատահում է երբեմն, որ մեկ ընտրելիի հասցեին ուղղուած վերաւորանքը նորա կուսակիցների ականջն է ընկնում, այդ դէպքում կռիւն ու ծեծը սնխուսափելի են դառնում, որոնք և յաճախ մեծ ծաւալ են ընդունում:

Եւ այս կերպով ընտրութեան նախնական պատրաստութիւնները տեսնելուց յետոյ կազմւում է մարդկանց մի՛ ողորմելի հաւաքականութիւն, որի իւրաքանչիւրը անդամը միւսի հետ միմիայն «խաթրի» շղթայի մի օղակով է կապուած, և որոնք համարեա՛ ոչխարային բնազդով դիմում են դէպի ընտրողական տուփը և քւէն ձգում: Ընտրւում է կամ այս կամ այն կուսակցութեան ընտրելին և ինչ էք կարծում մեծաւ մասամբ ինչպիսի՞ անձն, կաշառակեր (մանաւանդ որ գլաւաններն ռոճիկ չեն ստանում), բանսարկու, անխիղճ հարստահարիչ, խորամանկ ընտրիգանտ, մի խօսքով ժողովրդի մի կատարեալ ցեց: Ժողովուրդն այդ գիտէ, նա լաւ տեսնում է թէ ինչ է կատարւում իր շուրջը և իր հետ, այդ նրա համար մեւնոյն է, նա սովորել է, ուրիշ աւելի լաւ դրութիւն, աւելի մարդասէր կառավարիչ նա երևակալել անգամ չի կարող. այդպէս է եղել առաջ, այդպէս էլ պիտի լինի այժմ, ինչ մի տարօրինակ բան է, որ գլաւան կաշառք է առնում, տներ է քանդում, մթթէ մեզանից առաջ նոյնը չի արել Շ. գլաւան, ահա՛ այս է նրա հայեցակէտը և իրաւ որ նա սովորել է, անցնում է այս հրեշի բռնապետութեան 3 տարին, գիւղացիները դարձեալ հաւաքւում են, դարձեալ խաթիր, դարձեալ բարեկամութիւն և ընտրում են կամ նոյն անձին (20 տարի այս խայտառակ ձևով գլաւայութիւն անող անձինք կան) կամ բոլորովին նրա նման մի այլ հրեշ:

Այսպէս են ընտրւում և շինական դատաւորները, և մերաւները, և ջրաժանները, և գիւղական ռեսները և վերջապէս քահանաները: Օրէնքն այսպիսով անզօր է հոնդիսանում իր սրբական և բարերար դերը կատարել, որովհետև ժողովուրդը, ամբոխը գործում է դարերով իր մէջ բուն դրած և բարքերով սրբագործւած հակումների, ամենակոպիտ, անմարդասէր, բայց նրան (ամբոխին) դուրեկան դիտումների համեմատ: Այստեղ օրէնքները գարշելի պարզութեամբ պատուաստւում են արեւելեան խորը նահապետական ձևի հետ, այն ձևի, որի հիմքն են կազմում փեշքեշը, կաշառքը, խաթրը, թասիբը և բարեկամութիւնը:

Օրէնքների կիրառութեան այս ցաւալի եղանակը միջոց է տալիս միմիայն մասնաւոր անհատներին իշխելու, գործ կատարելու, անհատներ, որոնք իրանց հարստութեամբ այսպէս թէ այնպէս կոչւած են գիւղական հասարակութեան առաջնորդները լինելու:

Հասարակական կանոնաւոր ժողովներ, ուր իսկապէս գլաւայի նախագահութեամբ սկսի վճռւելին բոլոր համայնական խնդիրները, չեն գումարւում, մանաւանդ յաջողութեան կասկածելի դէպքերում: Նախապէս գլաւայի հաճութիւնն ստանալով մի որ և է հասարակական վճռի, օրինակ քահանայագլի համար, մի որոշ խումբ բարեկամների՝ գեղեցիկ հասարակական վճիռ են իմբագրում, նախապէս վերևում խնամքով գրելով «մենք այս ինչ հասարակութեան անդամներս գլաւայի նախագահութեամբ հասարակական ժողով կազմեցինք և միաձայն վճռեցինք... և այլն», բայց ինչ ժողով, ինչ միաձայն վճիռ, այս ու այն տունը, այս ու այն խանութը, հրապարակը շրջելով ստորագրել են տալիս ինչպէս իրանք են ասում «խաթրուչիւն», մնում է գլաւայի վաւերացումը և կնիքը, այդ էլ դժւար չէ, նա իրանց մարդն է, նրա հետ տեսնւել են, իրենց խաթրը կըպահի...

Հրէաները ընդհանրապէս օժտւած են և գուէլի քաջատրութեամբ. մի յատկութիւն սակայն, որ կարծես նշանակւած է Հրէի անձի պաշտպանութեան համար, ես այս կէտի վրայ առանձնապէս շեշտում եմ այն պատճառով, որ բոլոր քաջասիրտ ցեղերի մէջ զարգացած է լինում աւազակային հակումները, յափշտակութեան տենչը և ուրիշի վաստակը խլելու, կողոպտելու, սպանելու անյագ ցանկութիւնը, օրինակ քրդի, կամ թուրքի քաջասրտութիւնը շատ հեշտութեամբ է մղում դէպի նրանց աւազակութիւնները, կողոպուտներն ու սպանութիւնները մեծ ճանապարհի վրայ, դա իզիմուեանն անհրաժեշտութիւնն է, նրա զարդն է: Բայց Հրէն թէև նոյնքան քաջ է, որքան քաջ կարող է լինել մի աւազակ թուրք կամ քիւրդ, այնուամենայնիւ նա իր այդ յատկութիւնը արտայայտում է, երբ պէտք է իր կամ հարևանի անձը, սեփականութիւնը և պատիւը պաշտպանել: Ամբողջ Սուրմալու գաւառում իրանց յանդուգն քաջասրտութեամբ և յաջողակ գինաշարժութեամբ յայտնի գաշնակցութիւնք Հրէներ են: Գաշնակցում գիւղը հեռու է ընկած գաւառի մնացած հայ ազգաբնակութիւնից, նա գտնւում է երկու Մահսների ստորոտներին շատ մօտ և համարեա՛ բոլորովին շրջապատած է քիւրդերով և թուրքե-

րով, որոնք ինչպէս ամենաեղ, նոյնպէս և Սուրմալուում յայտնի են իրանց ցեղական աւազակային անհանգիստ բնաւորութեամբ, բայց գորանով հանդերձ անպայման տեղի են տալիս դաշբուռունցոց քաջութեան առաջ և երբէք յանդգնութիւն չեն ունենալ սոցա ցանքերը փչացնել, անասունները յափշտակել, գիշերով յարձակում գործել գիւղի վրայ, որովհետև այսպիսի յանդգնութիւնը նոցա վրայ շատ թանկ կրնստի։ Դէպքեր են եղել, երբ որևէ յափշտակութեան լուրն առնելով դաշբուռունցի մի խումբ կորիչներ ընկել են յափշտակողների ետևից, մտել են նոցա արօտատեղերը, և սարսափելի հրացանաձգութեամբ ոչ միայն աւարն են յետ խլել, հապա և թշնամու անասուններից, ոչխարներից էլ հետը բերել։ Վայ այնուհետև յափշտակողներից նորան, որ յանդգնութիւն կունենայ իր ապրանքի ետևից գալ։ Այսպիսի սխրագործութիւնները այնքան են բարձրացրել դաշբուռունցիների անունը իբրև յայտնի քաջերի, որ գիշեր ժամանակ թուրք ու քուրդ աւազակները են անգամ խոհեմութիւն են համարում ճանապարհից դուրս գալ, եթէ ձայնից ճանաչում են, որ եկողները դաշբուռունցիներ են, թէկուզ փոքր թուով։

Անցեալ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, մինչ գաւառի հայ ազգաբնակութեան մեծամասնութիւնը օսմանցւոց և մանաւանդ քիւրդ չէլօների մօտալուտ յարձակմանց լուրերով սարսափած, շտապեց թողնել իր տունը, տեղը, հարստութիւնը և փախաւ իր և իր զաւակների կեանքը փրկելու ցանկութեամբ միայն, դաշբուռունցիք այնքան արիասիրտ գտնուեցան այդ ընդհանուր տագնապի ժամանակ՝ մնալով իրանց գիւղում զինւած երիտասարդների պաշտպանութեան ներքոյ, որոնք եկեղեցու կորից, ուր հսկում էին գիշեր և ցերեկ, գնդակահար էին անում մօտեցող բաշիբոզուկներին։

Մեծ Մասիսի կրծքին մօտ 10 հազար ոտնաչափ բարձրութեան վրայ մինչև այսօր էլ կան հինաւուրց պարիսպների, շէնքերի, եկեղեցիների փլատակների մնացորդներ. դոցա ընդարձակ ծաւալն ապացոյց է, որ այդ տեղը մի ժամանակ մի մեծ հայաբնակ գիւղ, կամ աւելի ճիշտ՝ քաղաք է եղել. շրջակայքում կան և բազմաթիւ արևատական ջրամբարներ, ջրանցքներ, որոնցում ձիւնից առաջացած ջրերը և այսօր կուտակւում են, բայց և շուտով կորչում են անդունդների մէջ։ Այդ տեղը կոչւում է Ղօրղան, ինչպես և մօտի փոքրիկ թփերից և մացառներից կազմած անտառակը — Ղօրղանի մէշա (անտառ)։ Այս բարձրութեան վրայ ամառները միայն մագլցելով բարձրանում են քրդերը եալլաղ, իսկ նոցա հեռանալուց յետոյ ամայութիւն է տիրում, առանց որևէ կենդանի շնչից՝ եթէ չհաշւենք այն հսկայական արջերը և այլ գազանները, որոնք ապրում են այս ժայռերի և աւերակների մէջ։ Դէպի Ղօրղան վերելքը ծանր է և դժւարին, նեղ շաւիղներ, հեղեղներից առաջացած ահաւոր խորշեր, ահռելի ժայռեր՝ ամեն քայլում վտանգ են սպառնում ճանապարհորդին, մին ևս կողմից էլ պէտք է անցնել Մասի սառոյտներում, այրերի մէջ բուն դրած կատաղի քուրդերի մէջից. ամառ ժամանակ երթևեկութիւնն ունի և իր առանձին վտանգը, երկու Մասիսների քարքարոտ փէշերի վրայ վխտում են բազմաթիւ թունաւոր, հսկայական օձեր, որոնց միայն տեսքը մարդու սոսկում է ազդում։ Չնայելով վերոգրեալ բոլոր վտանգներին, անցեալ տարի դաշբուռունցիներից մօտ 30 տուն թոյլատրեցին խնդրեցին կառավարութիւնից նրանց հողերի սակաւութեան պատճառաւ Ղօրղանում բնակութիւն հաստատել։ Թոյլտւութիւնն արդէն ստացած է, խնդրատուները կամաց կամաց բնակւորւում են այդ վտանգների ընում։

Յիրաւի միայն Հւօն և այն էլ դաշբուռունցին է ընդունակ այդ անօրինակ ռիսկին անել։ Դաղթողները յոյս ունին ջրանցքները և ջրամբարները նորոգել, դէպի դաշտը ճանապարհներ հարթել և արգաւանդ երկիրը դարձնել այդ աւտզակների և արջերի բոյնը, չը վախենալով՝ ոչ քիւրդերի մերձաւորութիւնից, ոչ դրանց յանդուգն յարձակումներից, ոչ գազաններից և ոչ իսկ ընութեան արհաւիրքներից։

Խալֆալեցիք նոյնպէս քաջեր են. վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նրանք սրտոտութեան նշաններ ցոյց տւին, չընայելով՝ որ ամենից աւելի էին ենթարկուած պատերազմի արհաւիրքներին—թնդանօթի գնդակները տաճկաց բանակից այս գիւղի տների վրայ էր տեղում, իսկ մի խումբ չէլօների անսպասելի յարձակման ժամանակ մի քանի մարդիկ էլ զոհ գնացին։ Նոյն իսկ այժմ Խալֆալեցու համար մի առանձին դժւար գործ չէ անանցանելի լեռների կիրճերից, ահաւոր վտանգներից թռակոխելով՝ սահմանն անցնել գիշերով մէկ ցերեկով, մտնել Տաճկաստան, շրջել քիւրդերի մէջ, դրանց հետ առևտուր անել, գողացած անասուններ—ձի, եզ յետ բերել, առնելիքներն ստանալ ամենաարիւնռուշտ քիւրդերից և դարձեալ անվնաս վերադառնալ նոյն վը-

ահագաւոր ճանապարհներով։ Մինչև այժմ պատմըւում է թէ ինչպէս Արիստակէս Սրբազանի հայր Սեդրակը մի այսպիսի ճանապարհորդութեան ժամանակ՝ մենմենակ պատահում է երկու զինեալ քիւրդերի, մինչդեռ ինքը ունենում է մի հաստ ձեռնափայտ։ Քիւրդերը հեռուից առաջը կանգնելով՝ սպառնագին ձայնով պահանջում են ձին թողնել ճանապարհի վրայ և հեռանալ, հակառակ դէպքում հրացանի բերանները են ցոյց տալիս։ Սեդրակն իջնում է ձիուց և առաջարկում է ձին իր ձեռքից ընդունել, որովհետև, ասում է, եթէ բաց թողնեմ՝ կըփախչի, ափսոս է։

Քիւրդերը տեսնելով՝ որ նա համարեա անզէնք է, մօտենում են և գրանցից մէկը մեկնում է ձեռքը ձին բռնելու, բայց Սեդրակի ուժեղ ձեռքի փայտի հարւածը խորտակում է մեկնւած աչքը և քիւրդին զինաթափ դարձնում. փայտի երկրորդ հարւածը օգնութեան շտապող քիւրդին է դեսին գլորում. յաղթողը երկու աւազակին էլ կապում և անտարբերութեամբ քշում գիւղն է բերում ի մեծ զարմանս գիւղացւոց։

Երկար կըլինէր մի առ մի կանգ առնել Հըռօների քաջասրտութեան և անվեհերութեան բազմաթիւ փաստերի վրայ, ուստի մենք կարճում ենք, աւելացնելով որ ամբողջ գաւառում յայտնի քաջերը, յայտնի ըմբշամարտները Հռօներն են։ Իսկ լեռնային Մօլլազամար, Գիւլլիջայ և Ալբասգեօլ գիւղերի մասին և խօսել իսկ պէտք չէ, որովհետև այդ տեղերի բնակիչները, որպէս բուն լեռնականներ՝ քիւրդից դողալ չը գիտեն, եթէ միայն չը դողացնեն նրան։

Ա. ԱՂԱՐՈՆԵԱՆ

ՆԱԴՄՕՆԻՑ

Երազում տեսայ գիշերւան երկինք
Եւ նրա վրայ լուսավառ աստղեր.
Եւ բաց-կապուտակ լըճակի վրայ
Բաց-կանաչագոյն լալկան ուռիներ։

Եւ ողջ ընկղմած եզերանուռ մէջ
Ջո տունը՝ և քեզ՝ պատուհանի մօտ
Սպիտակ հանդերձով, գլուխդ խոնարհած
Դուռնաթափ դէմքով, չքնաղ ու թախծոտ։

Լալիս էիր դու. քո պարզ աչերից
Ցած էին թափւում պայծառ արցունքներ.
Եւ լոյս էր լինում թըրիերում սոխակ
Լայ էին լինում և գոռոզ վարդեր։

Եւ իւրաքանչիւր նոր արցունքի հետ
Ներքևը, բուրեան ու զով պարտիզում
Վառւում էր առկայծ մի լուսատրտիկ
Եւ կապոյտ երկինքն աստղեր գըլորում։

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ

1890 Թ. յունիսի 5.
Նոր-Նախիջևան

ՄԱՏԵՆԱԳՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐ, հազմից Ն. Տէր-Աւետիքեան. Թիֆլիս, տպարան Մ. Շարամբէի 1893. 188 էջ, գինը 1 րուբլի։

Եթէ մենք առանց նախապաշարմունքի ուշադրութիւն դարձնենք ոչ-քրիստոնէական կամ հէնց ուղղակի հեթանոս ժողովրդների վրայ, կըգտնենք, որ նոքա նոյնպէս ունին մտածելու ընդունակութիւն, զեղեցիկը ըմբռնելու ճաշակ ու իդէալական ձգտումներ։ Եւ հէնց այդպէս էլ պիտի լինէր, որովհետև հեթանոսները իրանց ֆիզիօլոգիական և հոգեկան կազմութեամբ նոյնպիսի արարածներ են, ինչպիսին մենք ենք։ Դեռ քրիստոնէական կրօնը յայտնելուց չատ առաջ հեթանոս եդիպտացիները, յոյները ու հռոմայեցիները կարողացան կուլտուրա ստեղծել, ու ինչպիսի նշանաւոր կուլտուրա։ Յոյները և հռոմայեցիք մանաւանդ կարողացան առաջ բերել ըրևելի դրականութիւն, բանաստեղծութիւն, զեղարուեստ, գիտութիւն։ Պլատոն և Արիստոտել, Սիկերոն և Վիրգիլիոս և չատ ուրիշ յոյներ և հռոմայեցիք այնպիսի նշանաւոր հանճարներ են, որոնց նմանները դեռ մեր օրերում հազւագիւտ երեւոյթներ են։ Եթէ մէկ բան պակասում էր հեթանոս մարդկութեան, այդ այն էր, որ նոքա դեռ չունէին գիտակցական բարոյականութիւն, զուրկ էին հաստատուն բարոյական սկզբունքներից։

Ահա այդ պակասը լրացնելու համար յայտնւեց քրիստոնէական կրօնը իր նուրբ-մարդասիրական և բարձր-բարոյական գաղափարներով, որոնց նպատակն էր բարեկարգ դրութեան մէջ դնել անհատի, ընտանիքի և հասարակութեան կեանքը, որպէս զի մարդիկ կարողանան աւելի եռանդով, աւելի յաջողութեամբ հետապնդել ճըշմարտութիւնը, ծաղկեցնել մարդի աշխարհը, որի սկիզբը դրել էին նոքա դեռ հեթանոսութեան օրերում։ Մենք չենք լսում քրիստոնէութեան հիմնադրից և ոչ մի բառ, որով նա մատնացոյց անէր մարդկային մարդի ստեղծած ճշմարտութիւնների վնասակարութեան վրայ։

Սակայն յետագայ դարերում յայտնւեցան մարդիկ, որոնք քրիստոնէական սկզբունքները կիսատ-պռատ հասկացած լինելով, սկսեցին տարածել այնպիսի սխալ գաղափարներ, որոնք մարդկութեան ճշմարտութեան առաջադիմութեան տեսակէտից անպայման վնասակար հանդիսացան։ Ի միջի այլոց նոքա տարածեցին այն սխալ միտքը, թէ քրիստոնէաները պիտի կատարելապէս հրաժարւեն նախկին հեթանոս մարդկութեան մարդի արդիւնքներից, թէ անելանելի է, յանցանք է քրիստոնեայի համար ուշադրութիւն դարձնել հին գիտութեան, զեղարուեստի և բանաստեղծութեան վրայ։ Նմանօրինակ սկզբունքներին

ծառայող պապական եկեղեցին չարունակ ճնշելով մարդկային ազատ մտածողութիւնը, զսպելով աստէղ ոտքի յայտնուող կենսալից հոգիների ազատական ձգտումները, դարերի ընթացքում սահեց մարդկութիւնը համարեա կատարեալ անշարժութեան մէջ։ Դարերը միմեանց հետեից անցնում էին, բայց քրիստոնեայ ազգերը ոչ մի քայլ չէին անում դէպի առաջ ոչ մտքի, ոչ գեղարուեստի և ոչ առհասարակ կեանքի մէջ։ Ազգերի ամենաընդունակ որդիները փչացնում էին իրանց ոյժերը աբոլատիկական բառախաղութիւնների մէջ, իսկ ամբոխը նիրհում էր կամ զբաղւում էր դապանավայել զբաղմունքներով....

Ինչպէս պարապութիւն զգացող հաւը փոսեր է փորում հողի մէջ, այնպէս էլ մարդկային ոյժն իր վայելուչ գործունէութիւնից հեռացած լինելով, սկսում է զբաղւել պատերազմներով, կոտորածներով։ Եւ ահա քրիստոնեայ ազգերը խաղաղութիւն չունէին և՝ ամեն մի անմիտ եւ ոճրոյթից մեծ խնդիր էին դարձնում և ոմանք սրա, միւսները նրա կողմն անցնելով սկսում էին միմեանց կոտորել։ Իսկ ինչ էին անում խաղաղութեան պատերը։ Ինչ պիտի անէին... Հէնց սրանք իրենք էին բոլոր խառնակութիւնների սկզբնական պատճառը։ «Պապերի աշխարհային իրաւունքի» խնդիրը քանի միլիոններ անմեղների արիւնն է հոսեցրել։

Աշխարհային մամոնասիրական ձգտումներ ունեցող կաթոլիկ հոգևորականութիւնը, բնական է, որ օրէցօր պիտի բարոյապէս ընկնէր, որի հետևանքը եղաւ նրա հեղինակութեան թուլանալը։ Ժողովուրդն այլևս սրբութեան ներկայացուցիչներ չէր համարում իր հոգևորականներին, սկսել էր քննադատել, հեղնօրէն վերաբերւել դէպի նրանց։ Բայց երբ ամբոխը աչքից ցցում է իր վատահութիւնը վայելածներին, նա սկսում է ուրիշ յենման կէտեր որոնել, նոր հերոսներ պատրել, առանց մարգարէների նա չէ կարող ապրիլ։ Առանց իդէալների սրբում է մի բարբարոսութիւնից արդէն դուրս եկած ազգ։ Հիասթափւում է նա եկեղեցուց, սկսում է նա գեղարուեստին ուշադրութիւն դարձնել։ Ընկնում է գեղարուեստը, ժողովուրդը դիմում է գիտութիւններին և այլն։

Առաջին ժողովուրդը, որ զգալով իր դրութեան անբաւարարութիւնը, սկսեց վերակենդանութեան նշանները ցոյց տալ՝ իտալական ազգաբնակութիւնն էր։ Նրա մէջ դեռ չէին վերջնականապէս մեռել իր նախկին մեծ որդիների ցանած սերմերը։ Միայն այդ սերմերը ճնշած մնալով, չէին բուսել, չէին ծաղկել, բայց և չէին փտել։ Թէև չատ չնչին թւով, բայց և այնպէս կային անհատներ, որոնք իրանց մտքի սնունդը առնում էին ոչ թէ վաւամոլ պապերից, այլ իրանց նախկին մոռացած ուսուցիչներից, նախկին Հռոմի տաղանդաւոր որդիների ստեղծագործութիւններից։ Միւս կողմից տասներեք և տասնուչորսերորդ դարերում Իտալիան ինչ ինչ արտաքին հանգամանքների չնորհիւ, կարողացաւ իր վաճառականութիւնը ծաղկեցնել, որի հետևանքը եղաւ նչանաւոր քաղաքների առաջ գալը և դրանց ազգաբնակութեան աչքի ընկնող հարստութիւնը։ Նիւթապէս փոքր ի չատէ ապահովութիւն ունեցող ժողովուրդը սկսեց չարժւել, մտածել, կեանք սկսանջել։ Տնտեսական դրութեան լաւանալը առաջնեակէս պահանջ զարթեցրեց ազգաբնակութեան մէջ ունենալ գեղարուեստ, գիտութիւն և դրա-

Կոստանդնուպոլսի հրդեհաշէջ (Թուլումբաջի)
(1864 Թ. հադուստով)։

կանութիւն։ Այդ պահանջը այնքան բնական և զօրեղ էր, որ նոյն իսկ հոգևորականութիւնը և հէնց մի չարք պապերը պաշտպան հանդիսացան ժողովրդի նոր պահանջներին։

Օրէցօր աճում էր Իտալիայում հին գիտնականներով, գրողներով և գեղարուեստներով զբաղելու սովորութիւնը, ելանցից մաքի և սրտի նիւթ քաղելու աշխատութիւնը։ Հների լեզուին տիրապետելը, նրանց գեղեցիկ ստեղծագործութիւնները ըմբռնելը, նոյն իսկ նրանց արամաբանութեամբ մտածելը տարածուեց և մոդա դարձաւ։ Պահանջից բնականաբար առաջ եկան Դանտէի, Պետրարկայի և Բոկկաչիոյի նման հանճարեղ բանաստեղծները—մտածողները, որոնք իրանց գրուածքներով մի կողմից միջոց էին տալիս կլասիկական կրթութիւնը տարածուելուն, միւս կողմից՝ աշխատում էին ստեղծել մի բուն ժողովրդական լեզու։ Սրանց ազդեցութեան տակ սկսեցին ծաղկել գեղարեստի բոլոր ճիւղերը։ Յայտնուեցին Միքէլ-Անջելոյի, Լէոնարդոյի և Ռաֆայէլի նման գեղարուեստական հանճարները, որոնք ամբողջ չկոլաներ առաջացրին և սկզբունքներ մշակեցին հանրամարդկային գեղարեստի համար։

Նոր զարթնած գիտութիւնների և դէպի բարձրը մատնացոյց անող գեղարեստների ազդեցութեան տակ ժողովուրդն աւելի ևս զգաց իր բարոյական աստիճանի բարձրացնելու անհրաժեշտութիւնը։ Ջնայելով մաքի մըչակուելուն և ճաշակի նրբանալուն, ժողովուրդը այնու ամենայնիւ մնում էր բարոյապէս ընկած դրութեան մէջ։ Բայց բարոյական-ցածութիւնը մանաւանդ այնքի էր ընկնում արիստոկրատ և հոգևորական դասակարգների մէջ։ Եւ ահա յայտնւում է Սաւոնարոլայի նման քանքարաւոր և եռանդուն քարոզիչ հոգևորականը, որն ամենայն անձնազոհութեամբ և առանց խնայելու՝ քննադատում էր արիստոկրատիայի, հոգևորականների և մինչև անգամ պապերի անվայելուչ կեանքը։ Նորա քարոզները մեծ ազդեցութիւն ունեցան ազգաբնակութեան վրայ, սակայն հոգևորականութիւնը չհամբերեց նորան և երկար վորձեր անելուց յետոյ տեսնելով, որ ոչնչով չէ զսպւում անվախ աբեղան, այրեց նորան խարոյկի վրայ։

Բայց մարդկային միտքը ազատ զարգացման ճաշակը առնելուց յետոյ, չէր կարող ոչ մի արգելքից զսպւել։ Նա չարունակից ծաղկել և տարածելով իր ազդեցութիւնը ուրիշ ազգերի վրայ, պատրաստեց հողը յետագայ բարեկարգիչների համար։

—

Ահա այդպիսի մի համաչխարհային պատմական երևոյթի հետ պիտի անպայման ծանօթ լինի ամեն մի կրթուել կամեցող մարդ։ Մեր գրականութեան մէջ անհրաժեշտ է սորա նման նշանաւոր երևոյթների մասին ձեռնարկներ ունենալ։ Պ. Տէր-Աւետիքեանի «Վերածնութեան դար» դիրքը առաջինն է իր տեսակի մէջ։ Հեղինակը ձգտել է օտար լեզուներից անծանօթ հայ ընթերցողին միջոց տալ ծանօթանալու իտալական վերածնութեան հետ։

Բայց պ. Տէր-Աւետիքեան չատ թոյլ կերպով է հասել իր նպատակին։ «Վերածնութեան դար» նման մի բարձր նիւթը մշակելու և նորան ժողովրդին կամ հէնց «աշակերտներին» (հեղինակի խօսքով) ինքնակրթութեանը նպաստող ձեռնարկ դարձնելու համար՝ անհրաժեշտ էր աւելի բարեխղճաբար աշխատել։ Հեղինակը պիտի երկար աշխատէր առհասարակ Եւրոպայի զարգացման պատմութիւնը պարզ հասկանալու և մանաւանդ վերածնութեան դարի նշանակութիւնը ճիշտ ըմբռնելու համար։ Վերածնութեան էութիւնը լաւ հետազօտելով հազիւ թէ հեղինակը գար այնպիսի անհեթեթ եզրակացութիւնների, որպէս օրինակ այն թէ «լարք ու բարքի աղնւաբարոյութեան տեսակէտից կլասիկական հնութեան վերածնութիւնը Իտալիայի համար անպատուղ անցաւ և նոյն իսկ վնասակար եղաւ»։ Չգիտենք թէ հեղինակը ինչ է հասկանում «անազնւաբարոյութիւն» ասելով։ Եթէ նա հասկանում է սեռական յարաբերութիւնները, պէտք է ասել որ Իտալիայում վերածնութիւնից առաջ դրանք աւելի անզուսպ էին և կեղտոտ։ Բայց հէնց այն միտքը, որ ձգտում է կաշկանդող կապանքներից արձակուել և ճշմարտութիւնը ինքնուրոյն կերպով հետազօտել՝ արդէն բոլոր ազնութիւնների հիմքն է։ Իսկ գեղարեստը, որ իր բոլոր ճիւղերի մէջ ծաղկել սկսեց՝ չէր կարող իր նրբացնող ազդեցութիւնը չանել բարք ու վարքի վրայ, ուր մնաց որ նա դեռ վնասակար դառնար։ Եթէ հեղինակը անազնւաբարոյութիւնը դնում է նորա մէջ, որ կաթոլիկ ժողովուրդը և հէնց հոգևորականները այլ ևս կուրօրէն չէին պաշտում պապերին, թոյլ էին վերաբերւում դէպի աւանդական հնութիւնները, այդ էլ իր ճաշակի գործն է, բայց մենք այդպէս չենք մտածում։ Համաձայն ենք, որ միանգամից իտալացիք չէին կարող բարոյական բարձրութեան հասնել, բայց որ ազատած միտքը և ճաշակը դէպի բարոյական բարձրութիւն էին մղում նրանց, սրանց մէջ չէ կարելի կասկածել։

Առհասարակ հեղինակը չի կարողանում պատշաճաւոր կերպով լուսաբանել այն անձանց, որոնք վերածնութեան դրօշակակիրներն էին։ Շատերի մասին ոչինչ չէ յիշում։ Իսկ օրինակ Պետրարկայի մասին, որին նա հումանիս մի ամենազգաստաւոր ներկայացուցիչն է համարում, ասում է. «Իտալական և ողջ եւրոպական լաւագոյն հումանիստի նահապետն ինքն իսկ ցոյց տուաւ իր հակապատկերը, այսինքն այն խոր տարբերութիւնը, որ կայ տեսականի և գործնականի մէջ, գիտութեան և կեանքի մէջ և կեղծ ու սուտի և այն ամբողջ սիստեմի մէջ, որ մենք հանդիպում ենք գրեթէ բոլոր իտալական հումանիստների մէջ»։ Երևի իր այդ սովետատութիւնները պայծառացնելու համար պարոնը խօսելով հումանիստների յաջորդ սերունդի մասին բացագանչում է. «Նրանք պրախօսում էին քրիստոնէութեան վրայ կամ անտարբեր էին դէպի նա և սուրբ գրքերը համարում էին ոչ թէ բարոյական վերանորոգութեան աղբիւր, այլ լոկ մի գրական յիշատակարան»։ Օ՜ պարոննէր, ձեր վերևների վրայ պէտք է ծունր դնել... Կեղծել. ձեացնել. ահա մեր տարաբախտ ազգի թոյլ յատկանիշներից մինը, որ արտացոլում է նոյն իսկ նրա որդիների գրչի տակից։ Իսկ եզրափակեան հիմնադիր Լոյոլային երկինք բարձրացնել, նրան հռչակել որպէս բարոյական վերածնութեան դրօշակակիր, քողարկելով թէ նրա իսկական ձգտումները և թէ եզբանների յետադէմ և կաշկանդող գործունէութիւնը, այդ արդէն չափից դուրս է։

Հեղինակը յայտնում է թէ իր գ՛րքը կազմել է

փոխադրելով Դուբևիչի հատընտիրից և Պալենկովի հրատարակութիւններից։ Ուրեմն մեծանուն «Վերածնութեան դար» դիրքը մի կոմպիլիացիա է, այն էլ չատ վատ ու անուշադիր կերպով կազմած։ Ցաւելոյն դէպք՝ քանի դեռ ասելի լաւ աշխատութիւններ չկան մեր դրականութեան մէջ նոյն նիւթին վերաբերեալ, խորհուրդ ենք տալիս հայ ընթերցողին կարդալ պ. Տէր-Աւետիքեանի դիրքը, միայն թէ զգուշութեամբ։

Ս. ԹԱՒԱՅԵԱՆՑ

ՔԵԼԻՔՑՕՆ

ՎՐԱՑՈՑ ԿԵԱՆՔԻՑ

«Կալիի» յօդուածները։—Վրացոց և հայոց յարաբերութիւնները պատմութեան մէջ և ներկայում։—Վրացի տիկինների ազդեցութիւնը։—Հայ վոդրաչիներ։—Հայերը Վրաստանում։—Գ. Ծերեթելի և քաղաքային ընտրութիւններ։

—

Մեզ համար միշտ նշանաւոր են եղել վրացոց կեանքի մէջ այն երևոյթները, որոնք այսպէս կամ այնպէս լուսաբանում են մեր՝ հայերիս և վրացիների յարաբերութիւնները։ Վերջին ժամանակ մեր դրացիների ինտելլիգենցիան առանձին ուշադրութիւն է դարձնում այդ խնդրին և այս օրւան օրա, մանաւանդ քաղաքային ընտրութիւնների առիթով, փորձեր են լինում ուսումնասիրելու Կովկասի երկու հարևան ազգերի թշնամութեան պատճառները և գոյց տալու դրանց դէմ առնելիք միջոցները։ Այդ դէպքում աչքի է ընկնում «Կալի» թերթի բռնած ընթացքը, մանաւանդ պարզուում է պ. Գէորգի Ծերեթելու յօդուածներով։ Պ. Ծերեթելին համառօտ կերպով պատմական ձևով ոտքատրճանում է, որ մինչև վեցերորդ դարը հայերը և վրացիք մէկ են եղել, որ երկու ազգերի կաթոլիկոսները շատ անգամ նոյն անձնաւորութիւններ են եղել, դաւանանքը նոյնը և ծագումն էլ նոյնը. Հայոցը (Հայկ) և Քարթլոսը եղբայրներ էին՝ Դաւիթ Կիւրապաղատին թէ հայերն էին ընդունում և թէ վրացիք իրանց թագաւոր, իսկ 13-րդ դարում Բագրատունի ցեղն թէ Վրաստանում էր թագաւորում և թէ Հայաստանում և երբեմն Վրաստանի մի մասը հայոց ձեռքն է եղել և երբեմն էլ Հայաստանի մի մասը վրացոց ձեռքին։ Միշտ տագնապի ժամանակ մի են եղել և միացեալ ոյժով են դիմադրել արտաքին թշնամուն. որ վրացին պիտի մոռանայ Աղրուսթեաններին, Օրբելեաններին, Ղորղանեաններին, Բեհբութեաններին, Դադեաններին և այլն։

Ապա իբրև տպագոյց նախկին հայոց և վրաց սերտ յարաբերութեան՝ առաջ է բերում տոհմերի մի ցանկ, որոնք թէ հայ են և թէ վրացի բացատրելով այդ հանգամանքը նրանով, որ հայն ուզում էր վրացու աղջիկ և որդին կամ լուսաւորչական կամ վրաց դաւանութեամբ էին մկրտուում, իսկ վրացին՝ ուզելով հայ աղջիկ, որդին կամ վրացի էր մկրտուում կամ հայ. այդպիսով կան վրացի և հայ Օրբելեաններ, Փիրալեաններ, Թումանեաններ, Մղեբրեաններ, Խարազեաններ, Ամիրանդիլեաններ, Դադեաններ և այլն։

—

Ի՞նչ է պատճառը, որ վրացոց և հայոց այժմեան սերունդը այնպէս են միմեանց հետ, ինչպէս շունն ու կատու և ամեն առիթից օգտուում են միմեանց վնասելու նպատակով։

Այդ հարցը լուծելու համար պ. յօդուածագիրը մի քիչ հեռուից է սկսում։

Երեսուն տարի սրանից առաջ վրացոց և հայոց յարաբերութիւնը բարեկամական էր՝ դնալ-գալը, ուրախութիւնն ու ցաւը մէկ էր հին սերունդի համար. նոյն իսկ վրաց դրականութեան առաջադիմութեան քիչ չեն նպաստել հայերը. մի՛թէ կարելի է մոռանալ Սայաթ-Նովային, Անտոնովին, Թումանիշվիլուն (Թումանեանց), Փերշանգիշվիլուն (Փերշանգեանց) և նորերս Հազիրին։

60-ական—70-ական թուականներին վերադարձաւ Ռուսաստանում կրթուած և բարձրագոյն ուսում ստացած հայ-վրացի երիտասարդութիւնը բոլորովին թարմ իդեալներով և գործելու ջերմ փափագով և նա գտաւ իր առաջ բաւականին լայն ասպարէզ. մի քանիսները հասարակական գործիչներ դարձան, մի քանիսը նոր բացած դատաստանատներ մտան, մի քանիսը քաղաքական վարչութեան ղեկը առան իրենց ձեռքները, մի քանիսը հրատարակեցին լրագիրներ։

Երբ այդ համալսարանականները ամուսնացան այն ժամանակուայ ինստիտուտներում ու գիմնազիոններում աւարտած օրիորդաց հետ, սրանք մտցրին իրանց ընտանիքներում կալիկների նման Եւրոպական արտաքին փայլը, սկսեցին ճոխ սեղան ընել, սենեակներն եւրոպական ձևով զուգել և մայրենի լեզուն վանել, այն ժամանակ այդ գեղեցիկ իդեալներով հայրենիք եկած երիտասարդները գարձան մամոնայի երկրպագուներ և միմեանց տակը փորողներ, ինչ է՝ աւելի առաջնակարգ տեղեր բռնեն, որպէսզի բաւականութիւն տան իրանց ամուսիններին։ Այդ ժամանակ պ. Ծերեթելու ասելով,

ասպարէզ է դուրս գալիս հայ հոգևորականութիւնը և յանձն է առնում նոր սերնդի կրթութիւնը. դրա արդիւնքն այն եղաւ, որ ծաղկեց և արագ քայլերով առաջ գնաց հայոց գրականութիւնը։ Մի կողմից վրաց տիկինների ձգտումն միշտ օտար լեզուներով խօսելու, մեւս կողմից հայերի ազգային-կրօնական ուղղութեամբ զարգանալը՝ ի հարկէ երկու ազգութիւնների մէջ հեշտութեամբ թշնամութիւն ծագեցրեց։

Պ. Ծերեթելինա ռաջ է բերում հետևեալը. Ռուս-տաճկական 1828, 1853 և 1877 թւականի պատերազմների ժամանակ Վրաստան և Երևանեան նահանգ գաղթեցին հայերը և ռուսաց հովանաւորութեան տակ մտան։

Որովհետև այդ ռուս-տաճկական պատերազմների ժամանակ հայերը մեծ օգնութիւն էին մատուցել ռուսներին, որովհետև նիւթապէս բաւականին ընկած էին, ուստի նրանց յանձնուեց զօրքին պաշար մատակարարելը։ Գ. Ծերեթելու ասելով, այդ հայերը կարճ ժամանակամիջոցում ահագին կալուածներով ոտի կանգնեցին և ամբողջ Վրաստանի վաճառականութիւնը իրանց ձեռքը ձգեցին և սկսեցին տոկոսներով փող տալ վրացոց և կամաց կամաց տիրեցին վրացոց կալուածների մեծ մասին։ Պ. Ծերեթելին պնդում է թէ այդ մարդիկ չէին կարեկցում վրացոց նեղ նիւթական վիճակին և այն էլ նրա համար, որ իրենք նորեկներ էին և սիրտները շատ էլ չէր ցաւում դրացինների համար։

—

Ամբողջ Վրաստանը ծածկուեցաւ հայոց ծխական դպրոցներով և ակամայ կռիւ մղեց վրացախօսութեան դէմ, աւելի զրգռուեց վրացոց թշնամութիւնը հայերի հետ և նոր սերունդի մէջ այնքան սերմանուեցատելութիւնն, որ մամուլի միջոցով սկսեցին միմեանց պախարակել. աւելի յաճախ այդ բանը լինում էր վրացոց կողմից, ինչպէս և նկատում է «Կեանքն»։ Այդ տխուր և ցաւալի երևոյթն այնտեղ հասաւ, որ երկու կողմից էլ միմեանց վնասելու համար պաշտօններում եղած երիտասարդները սկսեցին իրար վրայ անվրդովահեղութեան ստեր ձգել և միմեանց ոտների տակ փոս փորել։ Դրանից ի հարկէ չէր կարող օգուտ ստանալ ոչ վրացի, ոչ էլ հայ ազգութիւնը։ Այդ տխուր խորհրդածութիւններից յետոյ պ. Ծերեթելին մի խորհուրդ է տալիս հայ և վրացի երիտասարդութեան—զարթնել և անձնական շահերով (քաղաքային ընտրութիւնների ժամանակ) չը կուրանալ և աւելացնում է, որ հին սերունդը այլևս չի կարող յետ դառնալ, որովհետև նա այնպէս է սովորել և դժուար է նրան իր գաղափարներից ետ կանգնեցնել, իսկ ինչ վերաբերում է նոր սերնդին, նա աւելի զգայուն սիրտ ունի և կամաց կամաց ըմբռնում է այն օգուտը, որ կառաջանայ միասին գործելուց յանուն երկրի տնտեսական և բարոյական կատարելագործութեան։

—

Քաղաքային ընտրութիւնների առիթով քաղաքի ազգաբնակութիւնը շատ խմբերի է բաժանուել և կուսակցական կռիւը հասել է իր գագաթնակէտին։ Սլսօր լինելու է իրաւասուների ընտրութիւն։ Ինչպէս և միշտ ընտրողական պրոպագանդայի ժամանակ, այս անգամ էս առանց փոխադարձ զրպարտութիւնների չանցաւ։ Այսպէս «Իւերիա» վրացոց թերթի մէջ հրատարակուեց թէ «Կեանքի» գլխաւոր աշխատակից Գ. Ծերեթելին «Մշակ» և «Մուրճ» թերթերի անունով իբրև լիազօր՝ շաբաթ, ամսիս 8-ին, յայտնել է վրացոց խմբի նստում թէ ընտրելիների մէկ ընդհանուր ցուցակ կարող են այդ թերթերը և հայ երիտասարդութիւնը կազմել վրացոց հետ մխայն այն ժամանակ, երբ սրանք ցուցակից կրհանեն պ. պ. Զուբալովին, Ցխիտաձէին, Նիկոլաձէին և իշխ. Ճաւճաւաձէին։ Այժմ «Կեանքում» տպուած գրութիւնից երևում է որ այդ լուրը մի ետին նպատակով է եղել տպագրուած, Ծերեթելուն իբրև վրացատեաց ներկայացնելու նպատակով։ Բանից երևում է որ հինգշաբթի, մարտիսի 6-ին, պարոնը ժողովարանի առջև տեսնուել է պ. Զուբալովի հետ և յայտնել մասնաւոր կերպով, որ «Ծարազի» և «Մուրճի» խմբագրութիւններն առաջարկում են հանել ցուցակից առհասարակ այնպիսիներին, որոնք գրգռում են ազգային թշնամութիւնը գիտակցօրէն կամ անգիտակցօրէն, ի միջի այլոց և վերոյիշեալ պարոններին, (պ. Ցխիտաձէի մասին խօսք չէ եղել)։ Որովհետև պ. Զուբալովը, ինչպէս վերջը յայտնուեց, վիրաւորուել էր այդ առաջարկութիւնից, պ. Ծերեթելին շաբաթ օրը նախապատրաստական ընտր. ժողովից առաջ տեսնուել է Զուբալովի հետ և բացատրել թէ իրենից՝ Ծերեթելից վերաւորուելու տեղիք չը կայ, քանի որ դա իր ցանկութիւնը չէ որ յայտնել է. նիստը չէր սկսած և այնուհետև պարոնը թողել է ժողովրանը։ «Ամեն մէկը, գրում է պ. Ծերեթելին, կը հասկանայ «Իւերիայի» զրպարտութեան միտքը. այդ ինձ չէ զարմացնում։ Ինձ զարմացնում է որ ներկայ լարուած յարաբերութիւնների ժամանակ ինչպէս է որ մէկը չէ գալիս ծածուկ քամակից և չէ խրում դաշոյնը կողքիս մէջ։ Մենք պէտք է զարմանանք, եթէ մեր մէջ գտնուի որ և է բարոյական սկզբունք, իսկ անբարոյականութեան վրայ ինչ զարմանանք։»

ՅԱՐ. ՄԻՐԻՄ.

ԹԱՏՐՈՆ

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ ամսոյս 23-ին արքունական թատրոնում լինելու է յոգուտ տ. Շամիլրամի հայոց ներկայացումն։ Ներկայացնելու են Գ. Սունդուկեանի յայտնի «Քանդած օջախ» պիեսը։ Մասնակցելու են Թիֆլիսի հայ հասարակութեան քաջ ծանօթ մի քանի թատերասէրներ։ Աւելորդ չենք համարում յիշեցնել, որ տ. Շամիլրամը բեմ է դուրս եկել այն ժամանակ, երբ հայերը ամօթ էին համարում դերասանութիւնը, երբ ոչ մի հայ աղջիկ չէր համարձակւում արհամարանքով վերաբերուել դէպի այդ տեսակ նախապաշարմունքը, երբ, ասում ենք, դերասանուհիների փոխարէն բեմ պէտք է դուրս գային բեխերաւոր երիտասարդներ կանանց չորերով։ Ահա որպիսի ժամանակ է դուրս եկել Շամիլրամը և մեծ յաջողութիւն ունեցել տեղական տիպերի դերերում։ Կարծում ենք որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը պարտական է առանձին երախտագիտութեամբ վերաբերուելու դէպի իր առաջին դերասանուհիները, իր բեմի կարապետներից մինը եղել է անչուշտ Շամիլրամը։

—

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Այսօր, ամսոյս 16-ին Արքունական թատրոնի չինութեան մէջ կատարուելու է քաղաքային խորհրդարանի իրաւասուների ընտրութիւնը ըստ նոր Քաղաք. Օրէնսդրութեան։ Մէկ անգամից պէտք է ընտրուեն 96 հոգի, որոնցից 80—իրաւասու և 16 կանդիդատ-անձնավոխանորդ։ 2500 ընտրողներից արդէն մօտաւորապէս 1000 մարդ վերցրել է դահլիճը մանելու ժամանակ։ Բէլարկւում են 174 հոգի։ Կուսակցութիւնները բաժանել են հետևեալ եղանակով.» Դուրցովայա Նոմերա», կամ հին խորհրդարանի գործիչներ, հայ երիտասարդութիւն, վրացիք, մալականներ, և ռաներ Կալիչայա բալկայի, խմբագրութիւններ Արձագանք, Նոր-Դար, Кавказъ, Тиф. Листокъ միացած։ Ամեն մի կուսակցութիւն հրատարակել է իր ընտրելիների յատուկ ցուցակը, որոնք իրարից բաւականին տարբերւում են։ Ամեաուժ եղն է «Դուրցովայա Նոմերայի» կուսակցութիւնը իր ձայների թիւով, թէև այնու ամենայնիւ այդ թիւը տասնակ տասցածների թիւ կիսին չէ հասնում։ Կարող է պատահել որ մէկ օրւայ ընթացքում չընտրուեն բոլոր 96 հոգին, այն ժամանակ հետևեալ անգամ կըլինեն լրացուցիչ ընտրութիւններ։

—

Ինչպէս հաստատ աղբիւրից լսում ենք, Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձուների ընտրութիւն է նշանակուած։ Եկեղեցական պատգամաւորների ընտրութիւնը տեղի կունենայ հետևեալ կիրակի օրը, ամսոս 23-ին Հաւլաբարի և Թիֆլիսի եկեղեցիներում միաժամանակ։ Յայտնի է որ ամեն մի եկեղեցուց նախ պէտք է ընտրուեն երեք-երեք պատգամաւոր, որոնք այնուհետև իրար հետ ժողովելով՝ կընտրեն 12 հոգաբարձու։

—

Տափի թաղի Քամոյենց եկեղեցու ծխական ժողովին անցեալ կիրակի, ամսոս 9-ին ներկայ էին 48 հոգի ծխական, երկուսն էլ գրաւոր ուղարկել էին իրենց ձայները։ Երեցփոխ մի ձայն ընտրուեց փաստաբան պ. Պօղոս Գ. Մելիք-Ղարագեօզեան, իսկ հաչատուրները՝ պ.պ. Շիրվանզադէ, Կիրակոսեան և Ջաթալպաշեան։ Յայտնի է որ այդ եկեղեցին մեծ եկամուտներ ունի և մեր մամուլի մէջ երկարաբան վիճաբանութիւններ ծագեցին նախկին երեցփոխ պ. Հաքիմեանի ժողովրդին հաշիւ չներկայացնելու մասին։

—

Կուր գետը վարարել է այն յորդ անձրևներից, որ այս ամբողջ չորաթուայ ընթացքում անդադար գալիս էին թէ քաղաքում և թէ շրջակայքում՝ սարերում։ Հինգշաբթի ամսոս 13-ին առաւօտեան ժամի երեքից ջուրը ըսկսեց արագ բարձրանալ և թնդանօթները զգուշացրին եղերքին բնակուող ժողովուրդին, որ իր կեանքը և անձը վտանգից ազատելու մէջոցները ձեռք առնի. ժամի 12-ին ջուրը արդէն 5 արշին բարձրացել էր և հոսում էր Հաւլաբարի հիւսիսային կամուրջից միայն մի արշին ներքև։ Ամբողջ Սաղը, Դեսիմոնովկայա հրապարակը և Սաղի փողոցները, որով անցնում է ձիաքարշը, ջրի տակ էին։ Վերայի և Օրթաճալայի այգիները լցեցին ջրով. վնասները ահագին են։ Թէև խեղդուղ մէայն մէկն է եղել, սակայն դոյքից չատ բան է փչացել։ Քանդուել է Վարդանեանի լողարանը և տան մի մասը, Զուբալովի քարւան-սարայի ետին երեք յարկանի մասը, փուլ են եկել մալականների երկու տներ։ Վտանգ էր սպառնում Աւճալայի ջրմուղին։ Հեղեղը տարաւ Ռուսաստանի փոստը ռազմավիրական ճանապարհի վրայ 73 հազար դ. փողով։ Դեռ յայտնի չէ թէ ուրիշ տեղերում ինչ վնասներ են հասցրել գետը և հեղեղները։ Ժամի 3-ից ջուրը սկսեց պակասել, այնուամենայնիւ Սաղը դեռ ևս ջրի տակն էր։

—

Օր. Վարդուհի Յակոբեանի դասախօսութիւնը լինելուէ չորեքշաբթի, ամսոյս 16-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում։ Մուտքի մի մասը բարեգործական նպատակի է յատկացւում։ Դասախօսուհին կանգ կ'առնի նախ յունական և հռոմէական քաղաքակրթութեանց և կրթական եղանակների վրայ, ապա կանցնի միջին դարերին և այնուհետև ժամանակագրական կարգով թւելու է այն մանկավարժական տեսութիւնները, որ ծնունդ են առել նոր դարերում։ Օրիորդի՝ դասախօսութեան ամենահետաքրքրական մասը կազմելու է վերջին կտորը՝ զէյյցարական դպրոցական կազմակերպութեան նկարագրութիւնը կազմակերպութեան, որ և մօտոյ ծանօթ է օրիորդին։ Ինչպէս յայտնի է, օրիորդը իր ուսումը ստացել է Զէյյցարիայում։

—

Թիֆլիսում թէև դեռ չեն եղել խոշոր երային դէպքեր, սակայն երևոյթների մէջ սաստիկ տարածած է դիֆտերիտը և քութեշը, որ բաւական զոհեր են տանում։

—

Պոլսից հեռագրում են որ այնտեղ սկսել է մայիսի 3-ին քննել Մարսէյանի հայերի դատը։ Հիւսիս-ամերիկական և անգլիական դեսպաններն առանձնապէս զբաղած են Մարսէյանի դպրոցի ուսուցիչ Թումայեանի խընդրով։

—

Մոսկուայի գործարանատէրերը ուղարկել են Բուխարա մի քանի մասնագէտներ, որոնք պէտք է ուսումնասիրեն տեղական բամբակի լաւ տեսակները և ապա անկեն հարաւ-

յին Կովկասում, գլխաւորապէս Երեւանեան նահանգում, որտեղ արդէն կապալով վերցրած ունեն մեծ հողեր։

—

Պետական բանկի բաժանմունք հիմնելու հարցը Երեւանում, ինչպես լսել են մայրաքաղաքի լրագիրները, դրական կերպով է լճուած։ Եթէ այդ ուղիղ է, չուտով Երեւանում կըբացուին բանկի գործառնութիւնները։

—

Թուրքեստանի գեներալ-նահանգապետին իրաւունք է տրուած հեռացնել Բուխարայի և Խիւայի այն ռուսահպատակներին, որոնց վրայ ապատներ կընկատուին և որոնք անվստահելի են։

—

Թիֆլիսում վախճանուեց Կովկասեան ամենաակտիւոր պարոկիներից մէկը—Մամէդ խան Իբրահիմբէկով, որը կապալառուէր ռազմավիրական ճանապարհի։ Այդ մարդը մեծ անուն ունէր իր ազգակիցների մէջ։ Երկուշաբթի, ամսիս 10-ին տեղի ունեցաւ յուղարկաւորութիւնը դեռ չը տեսնուած չքեղութեամբ. առջևից տանում էին փալասներով ծածկուած 40 թաբախ մրդեղէններով և քաղցրեղէններով, գերեզմանատունը աղքատներին բաժանելու համար, դրանց հետևում էր մահմեդական երգիչների խումբը, այնուհետև հոգևորականութիւնը՝ մուֆթիի առաջնորդութեամբ, համքարները իրենց դրօշակներով և ահագին բազմութիւն։ Երեք բարձի վրայ տանում էին հանգուցեալի չքանչանները։ Դիակատքի վրայ բազմաթիւ պսակներ էին դրուած, նոյնպէս և դագաղի վրայ. դագաղը տանում էին ուսերի վրայ ռազմավիրական ճանապարհի ծառայողները։

Պարսից շահը հեռագրով իր ցաւակցութիւնն էր յայտնել հանգուցեալի ընտանիքին և հրամայել էր իր հիւպատոսին պարտ ու պատշաճ պատուով թաղել Մամէդ խանին, իբրև պարսկական ծառայութեան գեներալ-լէյտենանտին։

—

Վաճառականական վարչութիւնուպրատան վերանորոգելու մասին նորից խնդիր է ծագել ղեկավարող շրջաններում։

—

Արտասահման տեղափոխուղ և արտասահմանից ներս բերուղ ռուս թղթադրամների վրայ նշանակուած է մաքս 100 ռ. վրայ մէկ կոպէկ՝ ժամանակաւորապէս այս թուականի յունիսի 1-ից մինչև 1894 թ. յունուարի 1-ը։

—

Բնակարաններից վերցնելու հարկը արդէն հաստատուած է պետական խորհրդի մէջ։

—

Պաշտօնապէս յայտարարուած է, որ Ռուսաստանում հացի ցանքերը գաւառների 21%-ում լաւ են, 50%-ում բաւարար, 14%-ում միջակ, 4%-ում անբաւարար, իսկ 2%-ում աստիճ անբաւարար։

—

Զիկադոյի ցուցահանդէսը անցել են առաջին հինգ օրերը՝ 50.000, 19.534, 46.837, 23.000 և 35,000 հոգի։ Քաղաքի մէջ ուտելեղէնի և բնակարանի գները չափազանց թանգացել են։

—

Թիֆլիսով Պարսկաստան անցաւ երկաթուղով դրամահատական պաշտօնի նորից 243 փութ արծաթ, որ գնաւած է Լոնդոնում։

—

Անցեալ կիրակի, ամսիս 9-ին Թիֆլ. շրջանի դատաստանը վճռել էր արձակել իշխ. Նազ. Ամատունուն բանտարկութիւնից 30 հազարի գրաւականով։ Բայց արտաքին գործերի քննիչ Պանեւովը այնուհետև ներկայացրել է մեղադրական նոր կէտեր և այդ պատճառով նախընթաց վճիռը մնաց չըգործադրած։

—

Թիֆլիսի շրջակայքում, Մարղաբի մօտ կարկուտը փչացրել է ցանքերը և արօտատեղերը։ Վնասները մեծ են։

—

Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ նոր գրքերը.

Սահակ քահ. Սահակեանց։—Պատգիրք կրօնի, ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար. նոր-ուխտի նիւթի մշակութիւնը։ Հաւոր Բ. մ. II. տետր Ա. Հրամանաւ Տեղակալի կաթուղիկոսի ամենայն հայոց բարձր սրբազան Երեմիա եպիսկոպոսի։ Այս աշխատութիւնը կազմում է աշխատասիրողի նոյն վերնագիրը կրող դասագրքի չարունակութիւնը, որ պարբերաբար տպագրուում է Ց. Մարտիրոսեանցի տպարանում։

Բաֆֆի.—Վէպ ի ներ և պատկերք (տպուած և անտիպ աշխատութիւններից)։ Հատոր երկրորդ, հեղինակի երիտասարդութեան պատկերով։ Մեծադիր է, տպագրուած է սոյն թուին, Թիֆլիս Մարտիրոսեանցի տպարանում, գինը 2 ր. է։ Մօտիկ ապագայում լոյս է տեսնելու և՛ հեղինակի մի ընդարձակ աշխատութիւնը՝ Զահրումար անունով։

Վերածնութեան դար, կազմեց Ն. Տէր-Աւետիքեան։ Գիրքը միջադիր է և պարունակում է 188 էջ. տպագրուած է Մ. Շարաձէի տպարանում սոյն թուին Թիֆլիս, գինն է 1 ռուբլի։

Պիեր Լօտիլից նոյնի թարգմանութիւնը՝ Ուղևորութիւն Երնոդոբլայում, գինն է 10 կ.։ տպագրուած է նոյն տպարանում, սոյն թուին։

Նոյնի.—Կովկասեան հանքային ջրեր, պարունակում է Աբասթումանի, Բորժոմի, Պեատիգորսկի, Ժելեզնովոդսկի, Սաենաուսկի, Կիսլովոդսկի և Թիֆլիսի մասին մասնագէտների աղբիւրներից օգտուած կարևոր տեղեկութիւններ։ Տպագրուած է սոյն թուին Թիֆլիս, Շարաձէի տպարանում, գինն է 10 կոպ.։

Թ. Հ. Հրատ. Ընկերութիւնից. Պատարագ. նորա 70-ամեակի առիթով։ Գրքոյկի առաջին մասը կազմել է Ս. Բալաղեան, երկրորդը՝ Ա. Գալանթար։ Տպագրուած է Թիֆլիս, սոյն թուին Շարաձէի տպարանում, պարունակում է 83 էջ, գինը 20 կոպ. է։

Նոյն Ընկ.-Բժշկապետ Վ. Աբծրունի. Խոլերա, հանրամատչելի զրոյցներ և խրատներ։ Գրքոյկը տպագրուած է Մ. Լիսաինեանցի տպարանում սոյն թուին Թիֆլիս, բաղկացած է 69 երեսից, գինը խիստ արժան է՝ 5 կոպ.։

Այս երկու գրքոյկը հրատարակուած են «Հանրամատչելի գիտական գրադարան» անուան տակ։

—

«Աղբիւր» և «Տարազ» միաժամանակ ստացող մեր բաժանորդներից գուցէ մի քանիսը չեն վերցրել առաջին պրեմիան Գրիգոր Արծրունու մեծադիր պատկերը։ Այդ պատճառով

Նորից տպագրում ենք այն անձանց ազգանունները, որոնցից նրանք կարող են ստանալ մեր այդ նվերը.

Ախալցխա. օր. Եղիսաբեթ Տէր-Մովսիսեան։

Աբգարին. պ. Մկրտիչ Աղնաուրեան։

Ալեքսանդրապոլ. պ. Յովհաննէս Կոստանեանց։

Ամասիր. պ. ուսուցիչ Վախտանգ Նալբանդեան։

Ախալքալաք. պ. Ջալալ Յով. Տէր-Գրիգորեան։

Ախտալա. պ. Ալեքսանդր Գ. Աւագեան։

Բագուայ Բալախան. պ. Լևոն Մելիք Դադայեան։

Բաթում. պ. Արշակ Ծատուրեան։

Վաղարշապատ. պ. Պետրոս Սուքիասեան։

Վ. Ագուլիս. պ. Սարգիս Հախնազարեան։

Գորիս. պ. Աստուր Յովհ. Եօլեանց։

Ջալալօղլի. պ. Ուսուցիչ Բարսամ Դարչինեան։

Դերբենդ. պ. Սարդար Խազուրեանց։

Գանձակ. պ. Յակոբ Լիսկեան։

Զաքաթալ. պ. Բաղիշ Մկրզոյեան։

Կարս. Տ. Խորէն ք. Սամբոլցեանց։

Ղզլար. Բարեշն. Տ. Գէորգ ք. Մկրտումեան։

Քութայիս. Բար. Տ. Յովսէփ ք. Ամիրաղեան։

Լագոդեխ. պ. Արտաշէս Վաչեան։

Մոզդոկ. պ. Գրիգոր Լիսիցեանց։

Մեղրի. Ծխական դպրոց.

Նոր-Բայազէթ. ուսուցիչ պ. Աւետիք Ա. Հարոնեան։

Չին-Նախիջևան. պ. Կոստանդին Պօղոսեան։

Նուխի. պ. Յակոբ Ա. Հարոնեան (փոստատուն)։

Նոր-Նախիջևան. Բար. Յովհաննէս սարկ. Զարիֆեան։

Պետերբուրգ. տիկ. Մարիամ Շահլամեան։

Փոթի. պ. Յովհաննէս Թիւրքեան։

Սղնախ. պ. Արտեմ Օթարեան։

Սարի-ղամիշ. Եղբ. Բայեաթեաններ։

Շուշի. պ. Առաքել Բաբախանեան։

Շուլաէր. պ. Վախտանգ Մեհրաբեան։

Շամախի. պ. Պօղոս Ներսիսեան։

Թիֆլիսի բաժանորդները նէրը ստանում են խմբագրատանը։

Ժամանակ. Խմբագիր

Բժ. Դ. ԼԻՍԻՑԵԱՆ.

Հրատ. Տ. Նազարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շէյթպարական ծբնեէ քաղաքի համալսարանում մի ուսանող հայ դիմում է կարող անձերի, խնդրելով օգնել իրեն ուսումը աւարտելու և խոստանում է աւարտելուց առաջին առիթով վերադարձնել ստացած գումարը։

Աւարտելու համար մի տարւայ օգնութեան պէտք ունի, ամսական 40 րուբլու վճարով։

Հասցէի և տեղեկութիւնների մասին դիմել «Տարազի» խմբագրութեան։

Ուսանողը խնդրում է օգնութիւնը չտապեցնել։

Ծախւում է Թիֆլիսի Կենտրոնական և Կովկասի ուրիշ քաղաքների գրավաճառանոցներում

ԱՏՐՊԵՏԵՍՆԻ

„ԱԼՄԱՍՏ“ վէպը Բաբէր Հայոց կեանքից . . . . . 2 ր.

„ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ“ վէպը Հայ-Կաթոլիկների կեանքից 1 ր.

„ՇՈՒՇԱՆ“ պատկերազարդ Թղթահայերի կեանքից 1 ր.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. ՏՐՊԵՏԵԱՆԻ

ՍԱՐԱՓ

Ողբերգութիւնը հինգ արարւածով Թնւրքահայերի պատմական կեանքից։

Գինն է 30 կոպ.

Փառաւոր 60 կոպ.

Դիմել Կենդրոնական՝ գրավաճառանոց։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆԻ

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԴԱՐ

որի բովանդակութիւնն է.Ա. Ի. Վերածնուեան դարի նշանակութիւնը Իտալիայի համար։ II. Դանթէ, Բօկկաչիօ, Պետրարքա։ III. Կլասիքական հնութեան արծարծիչը Իտալիայում և նրանով հրապուրիչը XIV, XV դարերում։ IV. Շրջիկ յոյն ուսուցիչներն Իտալիայում և իտալական անուիկլոպեդները վերածնուեան դարերում։ V. Միքել Անջելօ Բօնարօտի՝ մեծ ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ։ VI. Լէօնարդօ դա-Վինչի։ VII. Ռափայէլ։ VIII. Սալվնարօլան։ IX. Իշնատիս Լօյոլա։

ԳԻՆՆ Է ՄԻԿ ՌՈՒԲԼԻ

Վաճառւում է կենդրոնական գրավաճառանոցում։

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Գ. Մելոյանցի և Ս. Լիսիցեանի

Հրատարակութեամբ

ՇԱՆԹ

1. ԼԵՌԱՆ ԱՂՋԻԿ

Գինն է 10 կոպ.

2. ԿԱՋԵՆ Թարգմ. օր. Միհրուհու

Գինն է 15 կոպ.

Դիմել „Աղբիւր—Տարազի“ խմբագրութեան

ՎԱՃԱՌՈՒՈՒՄ Է «ԱՂԲԻՒՐ»—ՏԱՐԱԶԻ»
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՔ

Երկու գոյնով տպւած։ Իւրաքանչիւր հատի գինն է մէկ րուբլի։

Դիմել «Աղբիւր»—«Տարազի» խմբագրութեան։

Բացւած է բաժանորդագրութիւն

ՐԱՓԻԻ

1) ՎԷՊԻԿՆԵՐ և ՊԱՏԿԵՐՆԵՐ Հ. Պ, գինն է 2 ր. 50 կ.
2) ՁԱՀՐՈՒՄԱՐ . . . . . 2 ր. — »
Լոյս տեսնելուց յետոյ . . . . . 2 ր. 50 կ.

—

ԼՈՑՍ ԻՏԵՍԵԼ

«ԿԱՑԾԵՐ»

Հատոր առաջին.

(Երկրորդ անփոփոխ տպագրութեամբ).

գինն է 2 րուբլի.

Յանկացողները ուղարկելով կանխիկ վճարելիքը՝ կարող են դիմել հեղինակի այրիին։

Նոյնտեղից կարելի է ստանալ և Րաֆֆիի միւս աշխատութիւնները այս հասցէով. Тифлисъ Сергѣевская ул. д. Лисицянца, № 20. Аннѣ Меликъ—Акопянъ-Раффи.

ԹԻՓԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԱՆ

Ջորեքշաբթի, մայիսի 19-ին, Թիֆլիսի ժողովարանի ձմեռային դահլիճում

ԲԵՐՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Փիլիսոփայութեան դոքտոր

ՕՐ. ՎԱՐԴՈՒՀԻ ՅԱԿՈԲԵԱՆ

Կը կարդայ հայերէն

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ».

Զուտ արդիւնքի մի մասը նշանակւած է խոլերայի դէմ կռւելու մասին գրքոյկի ձրի տարածելու համար։

Տեղերի գները՝ 2 ռ., 1 ռ. 50 կ., 1 ռ., 50 կ. և 40. *Տոմսակները կարելի է ստանալ Եփրեմ Յատուբեանի և Յով. Ս. Տէր-Սարգսեանի խանութներում Դուրգովայա փողոցի վրայ, իսկ մայիսի 19-ին ժողովարանի չէյցարի մօտ։*

Սկիզբն է $8^1/_2$ *ժամին երեկոյեան։*

ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է 1893 ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

պատկերազարդ ԱՂԲԻՒՐԸ եւ ՏԱՐԱԶԸ կը հրատարակւեն հմուտ աշխատակցութեամբ պ. պ. Գաբրիէլ Միրզոյեանցի եւ Ստեփան Լիսիցեանցի, նոյն ծրագրով եւ դիրքով.

Տարեկան բաժանորդագինն է՝ «Աղբիւրինը» 3 ռ., իսկ «Տարազինը» 6 ռ., ամսական «Աղբիւրինը»—30 կ., «Տարազինը»—50 կ.։ Տարւայ ընթացքում ընծաներ կըստանան մի միայն «Աղբիւր» եւ Տարազ» միասին ստացող տարեկան բաժանորդները, վճարելով ճանապարհածախք 14 երկու կոպեկանոց մարկա։ Ամսական բաժանորդները եթէ ցանկանան տարեկան բաժանորդ դառնալ, վճարում են նորից ամբողջ տարւայ բաժանորդագինը։ Լոյս տեսած առաջին ընծան՝ Գրիգոր Արծրունու մեծագիր պատկերը։

Ապառիկ ոչ ոքի չի ուղարկւում. ուսուցիչները, ուսանողները եւ աշակերտները գրւելով «Աղբիւրին» եւ «Տարազին» բաժանորդ, կարող են վճարել մաս մաս—7 ռ. ապրիլին, 2 ռ. մայիսի 1-ին։

Նոր ստորագրւողները կարող են ստանալ 1893 թ. լոյս տեսած բոլոր համարները։

Խմբագրատունը նորից ուղարկում է չստացած համարները միայն այն բաժանորդներին, որոնք համարը չ'ստանալու մասին յայտնում են գրասենեակիս համարը լոյս տեսնելուց յետոյ երկու ամսւայ ընթացքում։

Հասցէն փոխելու համար վճարւում է 35 կոպ. մարկա։

Հասցէն. Тифлисъ, Редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ, իսկ արտասահմանից՝ Tiflis-Caucase Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

Дозв. ценз. 15 мая 1893 г. Тифлисъ

Типографія Груз. Изд. Т—ва.